ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2024 թվականի փետրվարի 28-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնում ~~2025 թվականի հունվարի 1-ից~~ 2026 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2"1-ին մասով նախատեսված դեպքերի, և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջացած հարկային պարտավորությունների վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն առաջացած հարկային պարտավորությունների նկատմամբ սույն օրենքը կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում և կարգով:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն առաջացած և չկատարված կամ չգանձված հարկային պարտավորությունների ապահովման՝ Օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված՝ գանձման և (կամ) արգելանքի որոշման կայացման ժամկետը հաշվարկվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 10-րդ օրվանից, և չկատարված հարկային պարտավորությունների ապահովման և հարկադիր կատարման նկատմամբ կիրառվում են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգավորումները:

2 1 Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2024 թ. մարտի 25
Երևան
ՀՕ-104-Ն

Պաշտոնական հրապարակման օրը՝ 26 մարտի 2024 թվական: